



Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

(Ավագ գիտական աշխատող)

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ՈՐՊԵՍ ԳՐՈՒՍՈՒՅՑ

(ՄԵՆԴԵՍԱՆ 1600-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)



եր մեծ լուսավորիչ Մեսրոպ Մաշտոցը անմահ է ամենից առաջ որպես հայ գրերը հորինող, գրանով իսկ հայ գրականություն և ազգային դպրոց ստեղծող, Հայ Եկեղեցին ասորական և հունական լեզուներից ազատող։ Մակայն Մեսրոպը նաև մեծ լեզվաբան է և տաղանդավոր մանկավարժ։

Ահա թե ինչպես է գնահատում Մեսրոպի կատարած գործը Ղ. Աղալյանը իր «Մեր տառերի ծագումը...» անավարտ հոդվածում. «...Ով չգիտե, որ հեշտ չէր Լյութերի համար Ս. Գիրքը գերմաներեն դարձնել, ժամասացությունը գերմաներեն լեզվով կատարել։ Գերմանացի գիտե, թե ինչ հանճարի տեր էր Լյութերը, որ այդ բանը իմացավ և ի կատար ածեց։ Բայց մենք հայերս չգիտենք, որ Մեսրոպը հազար անգամ մեծ է, քան Լյութերը։ Լյութերը ամեն ինչ պատրաստ ուներ, և՛ գիր, և՛ գրականություն, և՛ շրջապատված էր անհամեմատ բարձր հանճարի տեր մարդկանցով։ Իսկ Մեսրոպը այդ բարեհաջող հանգամանքներից զուրկ էր և այնուամենայնիվ ասիական խավարամիտ անշարժ ու բարբարոս ազգի մեջ ոչ ասիական, այլ եվրոպական, հնչական գրեր հնարեց և Եկեղեցին ազատեց ասորական և հունական լեզուներից։ Մեսրոպը իր այս կարևորագույն գործով բարձրանում է ամբողջ Ասիայի մեջ այնպես, ինչպես լյառն Արարատը»։

Մեր այժմյան այբուբենի տառերի կարգը և անունները Մեսրոպ Մաշտոցի դրածներն են։ Բացի ը, ի, ն տառերից մյուսների անունները մնացել են անփոփոխ։ Ըբ, ինի, նու տառանունները Մեսրոպ Մաշտոցը կոչել է եբ, ին, նո։ Տառերի անվանակոչության

մեջ դեր են խաղացել թե՛ սեմական և թե՛ հունական տառանունները։ Մեսրոպը օգտվել է թե՛ մեկից և թե՛ մյուսից, ընտրել է նրանց միջից իրեն ավելի հարմար երևացածները և հնչական փոքրիկ փոփոխություններ կատարելով աշխատել է հատկապես կարճ, միավանկ, դյուրահնչուն անուններ ստեղծել։ Գրաճանաչության ուսուցումը հեշտացնելու նպատակով մեծ մանկավարժ Մեսրոպը կրճատել և համառոտել է սեմական և հունական ծանր անունները հետևյալ ձևով¹.

Ասորական	Հունական	Հայկական
ալաֆ	ալֆա	այբ
բեթ	բետա	բեն
գիմել	գամմա	գիմ
դալաթ	դելտա	դա
զային	զետա	զա
թեթ	թետա	թո
մեմ	մու	մեն
նուն	նու	նու

Հետաքրքրական է, թե ինչպես հունական ալֆա երկվանկ տառանունից ստացվել է հայկական այբ միավանկ տառանունը։ Ակադեմիկոս Հ. Աճառյանը գտնում է, որ ալֆա անունը միավանկ դարձնելու նպատակով կրճատված է վերջին ա ձայնավորը, հայերենի ֆ հնչյունը չունենալու պատճառով փոխարինված է փ-ով, որը հաջորդ բն տառից ազդվելով փոխվել է ք-ի. այսպիսով ստացվել է ալք, որի մեջ լ բաղաձայնը փոխվել է յ կիսաձայնի՝ դյուրահնչուն դարձնելու նպատակով։

¹ Հ. Աճառյան, «Եւրոպացի գրերը», Վիեննա, 1928 թ., էջ 285։

Մեսրոպյան տառերի անունները բա-
ժանվում էին հետևյալ հինգ խմբերի.

1. դա, դա, ծա, ձա, շա, չա, ոա.
2. է, ժե, խե, ճե, պե, ջե, սե, բե, քե.
3. վո, թո, հո, նո, ցո.
4. բեն, կեն, մեն.

5. լյուն, տյուն, հյուն:

Առանձին են մնում այբ, գիմ, եթ, ղատ,
վե, եշ, ին, ճի, փյուր տառերը:

ները միշտ էլ՝ տառանվան սկզբնահնչյու-
նով (այբ, բեն, գիմ, դա, եշ, զա):

Այսպիսով, տեսնում ենք, որ տառերի ան-
վանակոչության մեջ Մեսրոպյան մանկավար-
ժական-մեթոդական մեծ հմտություն է ցու-
ցաբերում: Այդ տառանունները այնպես
կարճ են, դյուրահնչուն և միշտ իրենց
սկզբնահնչյունով սկսվող, որ շատ հեշտու-
թյամբ են անգիր արվում և հիշողության



ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Հատիներեն տառանունների հետ համե-
մատած հայերեն տառանուններն ավելի
հաջող էին, որովհետև կազմված էին որոշ
սիստեմով: Հատիներեն տառերն արտա-
սանվում են մերթ տառանվան սկզբնա-
հնչյունով (էֆ, էս, էռ). իսկ հայերեն տա-

մեջ մնում: Տառերի հաջող անվանադրու-
թյամբ պիտի բացատրել, որ իրենց գոյու-
թյան 1553 տարվա ընթացքում նրանք պահ-
պանել են իրենց անունները բացի, ինչպես
ասվեց, 3 անունների մասնակի փոփոխու-
թյունից:

Մեսրոպը, ինչպես հիմնավոր և համոզեցուցիչ կերպով ապացուցում է պրոֆեսոր Կ. Ղաֆադարյանը, հորինել է գրի երեք տեսակներ, երեք տարբեր նպատակների համար՝ ներագույն կամ նոտագիր, որ ինչպես անունն է (գրագիր, արտագրող) ցույց տալիս, առանձին գործածության համար է եղել, կա՞նք կամ ուղղագիծ երկաթագիր՝ ձեռագիր մատյանների համար և վերջապես երկայն կամ բոլորածն երկաթագիր՝ վիճակյալ արձանագրությունների համար։ Այսպիսով, Մեսրոպը տառերի գծագրման մեջ էլ ունենում է մանկավարժական մոտեցում։ Սովորական գրություն համար առաջարկվում է նոտագիրը, որը արագագրության համար հարմարեցված մանր գիր է, հեշտությամբ է գրվում և դյուրընթեռնելի է։

Մեսրոպը՝ տառերը հորինելուց, դասավորելուց և գծագրելուց հետո այդ նոր տառերով երկու տարի իր աշակերտներին կարդալ է սովորեցնում։ Գրաճանաչության ուսուցման ժամանակ նա գործնականորեն պարզում է, թե հայոց լեզվի բոլոր վանկերն արտահայտելու համար ի՞նչ հնչյունների նշաններ են պահանջում, որոնք և լրացնում, վերջնականապես ամբողջացնում ու կատարելագործում է հայկական այբուբենը։

Այսպիսով, Մեսրոպը ոչ միայն հայերեն գրերի ստեղծողն է, այլև հայերենի առաջին ուսուցիչը, առաջին հայ գրուսուցյոր։ Առաջին անգամ նա է սովորեցրել հայերեն կարդալ և գրել։

Միանգամայն հասկանալի է, որ Մեսրոպը իր աշակերտներին գրաճանաչություն պիտի ուսուցաներ հույներից և ասորիներից փոխ առած հեգական մեթոդով, որ մեզ մոտ զանազան վարիանտներով գործածվել է 1500 տարվա ընթացքում։ Պարզ է, որ Մեսրոպը այդ մեթոդը վերցրեց ոչ նույնությամբ, այլ որոշ բարեփոխություններ կատարելով և հայոց լեզվի առանձնահատկություններին հարմարեցնելով։ Ամենայն հավանականությամբ մեր մեծ լեզվաբան-մանկավարժ Մեսրոպը երեխաներին կարդալ սովորեցնելուց առաջ պետք է անցներ խոսքի մասերը և ոչ էլ անգիր անել տար տառերի անունները՝ առանց տառերից լույց տալու, ինչպես անում էին Հունաստանում։ Չէ՞ որ Հայաստանի քաղաքական պայմանները հրամայական պահանջ էին դնում արագացնել հայերին գրագետ դարձնելու գործը, մանավանդ որ մեր այբուբենի տառերը շատ ավելի էին հունական տառերից և վերջապես մենք դեռ չունեինք այդ ժամանակ հայոց լեզվի քերականությունը։

Այսպիսով, Մեսրոպը հանդիսանում է հայերենի գրուսուցման հեգական մեթոդի

հիմնադիրը։ Մեսրոպը իր աշակերտներին հենց սկզբից կարդալ սովորեցրել է գրելով։ Եվ այդ շարունակվել է մինչև սպագիր գրքի տարածումը։ Այլ կերպ էլ չէր կարող լինել։ Չէ՞ որ մագաղաթի վրա գրված այբբենարանը շատ թանկ էր։ Լավագույն դեպքում այբբենարանը կարող էր ձեռք բերել ուսուցիչը որպես մեթոդական ուղեցույց և ղեկավարվել նրանով, իսկ աշակերտները պիտի գրեին տախտակի կամ պնակիտի վրա և կարդային։ Այսպես, օրինակ, Ժ. Ղարում եվդոկիայում գրված այբբենարանում² ուսուցիչներին հրահանգվում է աշակերտների տախտակների վրա գրել բառեր, որոնք պիտի կարդային նրանք և ապա ընդօրինակեին։

Այս նույն տախտակի մասին խոսվում է Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի»-ի մեջ (Թիֆլիս, 1912, էջ 61), որտեղ այն անվանվում է պնակիտ, որը դպրոց նոր ընդունվող աշակերտներին տալիս էր ուսուցիչը այբբենարանի փոխարեն և որի վրա ինքն էր գրած լինում տառերը։

Աշակերտները սովորում էին տառերը և ապա խմբովին կարդում։ Տառաճանաչությունն անցնելուց հետո անցնում էին զբրկապությանը, ինչպես Ե. Ղարի հեղինակ Հովհան Մանդակունին է ասում՝ «Գիր զգրոյ կախելով անաշխատ բերելով գհեգենայն» (աճառք, Վենետիկ, 1860, էջ 27)։ Այս անգամ ուսուցիչը պնակիտի վրա գրում էր վանկեր և աշակերտը տառերը գիրկապ անելով սկսում էր կարդալ այդ վանկերը և համար էր տալիս ուսուցչին։ Վերջինս ջնջում էր պնակիտի վրա գրած վանկերը և նորերը գրում։ Գիրկապի մեջ լավ վարժվելուց հետո անցնում էին վանկապության։ Ուսուցիչը գրում էր պնակիտի վրա բառեր։ Նույնը աշակերտներին էր գրել տալիս։

Պնակիտը, որ մենք վերցրել ենք հույներից և ասորիներից, քառակուսի փայտե փոքրիկ տախտակ է, որը ծածկված է լինում մեղրամոմի բարակ շերտով։ Մեսրոպ Մոշտոցից սկսած 1200 տարվա ընթացքում նա փոխարինել է թե՛ այբբենարանին և թե՛ տառերին։

Պնակիտի վրա գրում էին երկաթե ձողիկով, գրչով՝ որի մի ծայրը սուր էր և գրելու համար էր գործածվում, իսկ մյուս ծայրը բութ էր, գրածը հարթեցնելու կամ ռչրն-

² Եվդոկիայում 1589 թվականին գրված «Գիրքս այս տղայ՝ կարդացնելոյ՝ որ քան ք յուսումս գրոցը այբբենարանը, որը գտնվում է Երևանի Մատենադարանի Ձ 1869 ձեռագիր ժողովածուում և բռնում է նրա 388—393 թերթերը։

ջելու համար: ԺԹ դարում մոմապատ պնակիտին փոխարինում է ներկված պնակիտը, որի վրա գրում էին մի այլ գույնով և հետո գրածը քրով մաքրում և նորը գրում: Ներսես Շնորհալին գրում է, որ պնակիտը («տախտակ») կոթ ուներ բռնելու համար: Այս կոթը ուներ անցք: Աշակերտները պնակիտը կախում էին իրենց կողքին վզից զգած հաստ թելով, որպեսզի գետին չգցնին կամ չվնասեն և միշտ իրենց հետ ունենալին:

Պնակիտի վրա գրում էին ոչ միայն բաներ, այլև նախադասություններ Սաղմոսի առաջին կանոնից, ինչպես տեսնում ենք ԺԵ դարում գրված հայերեն ձեռագրի նկարում (Նրեանի Մատենադարան, ձեռագիր № 3714, թերթ 14բ, գրված 1419 թվականին Գրիգոր գրչի կողմից):



ՌԵՍՈՒՑՈՒՄ ՊՆԱԿԻՏԻ ՎՐԱ

Չնայած Մեսրոպը 406 թվականին (ըստ ակադեմիկոս Մ. Աբեղյանի՝ 403—405 թ.թ., իսկ ըստ ակադ. Հ. Մանանդյանի և պրոֆ. Ն. Ադունցի՝ 390—ական թվականներին) առաջին հերթին թարգմանեց Սողոմոնի կրոնաբարոյախոսական առակները և նրանցով էլ առաջին հերթին սովորեցրեց իր Հովհան և Հովսեփ աշակերտներին, բայց Սաղմոսին էլ վիճակված առաջին ընթերցարանը լինելու բախտը և Մեսրոպը իր աշակերտներին պնակիտով գրաձանաչ դարձնելուց հետո, ամենայն հավանականությամբ, նրանց կարդալ է տվել «Փոքր Սաղմոսը» (սաղմոսների առաջին կանոնը): Այդ են ցույց տալիս Ե դարի հայ պատմագիրների հետևյալ վկայությունները:

Ղ. Փարպեցին ասում է, թե բոլոր «մեծամեծք և տղայք» սաղմոսներն անգիր գիտեին և դրանք նրդում էին ամեն տեղ՝ Ե հրապարակա և ի փողոցս և ատանին:

Եղիշեն ասում է, որ ձերբակալված և արտոնված նախարարները, ինչպես շափահասները, այնպես և պատանիները միասին երգած սաղմոսներով մոտրում էին իրենց պանդխտությունը, որ վարդանանք Աղվանից կովից առաջ և հետո սաղմոսներ էին հնչեցնում:

Այդ մասին հիշատակում է նաև Ժ դարի պատմիչ Թովմա Արծրունին, որ սասունցիները «հանապազ ի բերան ունէին» սաղմոսները: Նույնպիսի բաղմամբով հիշատակություններ կան Ժ-ԺԵ դարերի պատմագիրների մոտ:

ԺԵ-ԺԹ դարերում ալբերկներին հետ հիմնականում դարձյալ որպես առաջին ընթերցարան ծառայում է Սաղմոսը, սակայն դպրոցական գործածության համար հարմարեցրած՝ վանկերի բաժանած, հեղելու գիրք հատուկ հեգարան, ինչպես տեսնում ենք Թեոդոսիայում 1863 թվականին հրատարակված «Հեգարան հայ լեզուի ի վարժութիւն ընթերցանութեան» գրքի առաջին էջից, որտեղ բառերը հորիզոնական գծիկներով վանկերի են բաժանված, ինչպես և Թուրքիայի Նիկոմիդիա քաղաքում 1885 թվականին լույս տեսած «Հեգարան մանկանց» գրքից, որտեղ բառերն են իրարից բաժանված ուղղաձիգ գծերով, իսկ բառերի վանկերը իրարից հետո են տպված առանց բաժանման գծիկների:

Այսպիսի հեգարաններ կամ հեգերեններ («Առաջին կարդալու գիրք նոր կարգով սկսողներուն համար») լույս են տեսնում Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքում 1790, Վենետիկում 1804 և 1809, Վիեննայում 1815, 1839, 1849 և 1893, Ջմյուռնիայում 1832, 1836, 1840 և 1842, Թրիլիսիում 1842, Մոսկվայում 1842, Կոստանդնուպոլսում 1837, Էջմիածնում 1865, Ռուստովում 1873, Երուսաղեմում 1875, 1881 թվականներին՝ 48-ից մինչև 96 էջ ծավալով:

Որ իսկապես Սաղմոսագիրքը ամենասիրված ընթերցարանն է եղել, այդ երևում է նաև նրանից, որ հիմնականում ԺԹ դարի առաջին կեսում հայկական բոլոր դպրոցներում և դրանից հետո նույնիսկ ԺԹ դարի երկրորդ կեսում խալիֆայական դպրոցներում որպես առաջին ընթերցարաններ մնում են հեգարան-սաղմոսները, ինչպես այդ երևում է մեր մի շարք դասագրքերի առաջարաններից, մեր գրողների ինքնակենսագրություններից և հին դպրոցին վերաբերող նկարագրություններից:

3 Նույնիսկ 1920 թվականին Կոստանդնուպոլսում Զարգարյանի գրախանութը ծախել է «Հեգարան մանկանց հին ոճով», 5 դրուով:

Խալֆայական դպրոցներում Փոքր Սաղմոսը գիրկապ անելով էին հեգում, իսկ Մեծ Սաղմոսի մյուս կանոնները առանց գիրկապ անելու էին հեգում, այսինքն վանկ-վանկ էին կարդում: Առանց տառանուններն ու վանկերն ասելու կապակցված կարդալ էին սկսում, ասելու կամ ժամագիրքը կարդալուն: Այդ բանը կամ ժամագիրքը կարդալու և երգելով՝ գրքերը կարդում էին շատ բարձր և երգելով՝ աշնպես, ինչպես կկարդային եկեղեցում ժամերգության ժամանակ: Ոչ մի երեխա չպիտի մերգության ժամանակ: Այլ մի երեխա չպիտի լուեր, այլ շարունակ պիտի բարձրաձայն կրկներ և աշնքան սերտեր, որ անգիր անեն: Այդ գրքերը նույնիսկ տանը կիսաերգելով էին կարդում:

Ա	Բ	Գ	Դ	Ե	Չ
Է	Ը	Թ	Փ	Ի	Լ
Խ	Ծ	Կ	Ն	Ձ	Ղ
Ճ	Մ	Ս	Ն	Շ	Ո
Չ	Պ	Ջ	Բ	Ս	Վ
Տ	Ր	Յ	Ի	Փ	Ք
Օ	Փ				

+					
Յայ օղնեա ինձ					
արգ .	զեղ .	էըթ .	մել .		
խծկ .	հնդ .	ճմյ .	նշո .		
չպլ .	ոսվ .	արց .	ւփք .		
հօֆ. Աժ իմ.					
աա բբ զզ. զզ	հհ զզ. էէ բբ	բբ.			
ժժ իի լլ. խխ	ծծ կկ. հհ զզ.	հհ			
ճճ մմ յյ. նն	շշ ոո. ըը պպ	ըը.			
ոո սս վվ. տտ	բբ ցց. ււ փփ	քք.			
հհ օօ ֆֆ. Աժ իմ.					
ախյ. բծպ. զկլ.	զհո. հնս. զզվ.				
էնո. բմբ. բյց.	մնւ. իշփ. լոք.				
հօֆ. Աժ իմ.					
ամնն. բիմն. զլլվ.	զխնո.				
հծչբ. զկոց. էհլւ.	բնպփ.				
բզլք. հօֆ. Աժ իմ.					

«ՅԱՐՄԱՐԵԱԼ Ի ՎԱՂ ԺԱՄԱՆԱԿԱՅ ՔԵՐԱԿԱՆ՝ ԿԱՄ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ»-Ի ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԵՋԵՐԸ

Ահա այս նկարագրած ձևերով էլ պետք է պնակիտով և Սաղմոսով կարդալ սովորեցնել իր աշակերտներին մեր մեծ լուսավորիչը: Գրաճանաչության ուսուցման երկու տարվա փորձի հիման վրա նա տառերը, ինչպես կորյունն է ասում, «հորինում է սիդոբաներով — կապերով», այսինքն, դրանք դասավորում է վանկերով՝ «կապերով» կարդալու, «գիրկապ» կարդալու համար: Ուրիշ խոսքով Մեսրոպը հորինում է գրաճանաչության ուսուցման դասագիրք՝ այբբենարան, որով պիտի ղեկավարվեին իր գրագետ դարձած աշակերտները և նորաբաց հայկական դպրոցներում հայերեն կարդալ սովորեցնեին պնակիտի վրա գրելով այբբենարանի դասերը:

Այսպիսով, Մեսրոպը առաջին հայ այբբենարանի, ուրիշ խոսքով առաջին հայ դասագրքի հեղինակն է: Մի դասագիրք, որ բացառիկ կարևոր դեր է խաղացել հայ այբբենարանի 1500-ամյա փառավոր պատմության

մեջ: Մեր հնագույն կուլտուրային լավատեղյակ, ականավոր բանասեր Բարգն՝ վարդապետ Կյուլեսերյանը (հետագայում Կիլիկիայի կաթողիկոս), եղելով 1891 թվականին Կոստանդնուպոլսում Հակոբյանի տպարանում տպագրված «Քերական կամ այբբենաբան»-ի առաջին էջերում տրված տառախմբերի թվաբանական հաշիվների վրա հիմնված 5 ձևերի դասավորությունից (ինչպես օրինակ, 5-րդ ձևի ա, ծ, ե, ո, ր, ի, մ, ս...): այսինքն՝ 1, 10, 100, 1000. 2, 20, 200, 2000..., որոնք ներկայացնում են միավորի, տասնավորի, հարյուրավորի և հազարավորի թվաբանական պրոգրեսիան): «յարմարեալ ի վաղ ժամանակաց» հնաձև քերականության լավագույն ձևերը:

կանի հեղինակ ընդունում է է դարի հայ հուշակավոր մաթեմատիկոս Անանիա Շիրակացուն հետևյալ վերապահությամբ. «Երանի կարող ըլլայինք քերականին հնագույն, այսինքն՝ նախնայաց ձեռքեն ելած հարազատ օրինակները ունենալու, ավելի հետաքրքրական եղրակացություններու հանգելու համար, վասնզի այս ճի վաղ փամանակաց» հորինված քերականը ենթարկված է փոփոխություններու և աղավաղումներու... («Հայ տղու առաջին դասագիրքը», «Անահիտ», 1911, № 3—4, էջ 73):

Եվ իսկապես հնաձև այբբենարանների 1699, 1781, 1842, 1865 թվականների հրատարակությունների մեջ պակասում են հիշյալ այբբենարանի 2-րդ էջի Ա, Բ, Գ ձևերը, իսկ այլ բազմաթիվ հնաձև այբբենարանների մեջ Ա ձևը: Հետևաբար կարող ենք որոշակի ասել, որ եթե «փոփոխություններու և աղավաղումներու» շենթարկված բազմաթիվ

այլ հնաձև ալբերենարաններ լինեին Բարգեն վարդապետ Կյուլենսերյանի ձեռքին, նա այդպիսի եղրակացություն չէր հանգի և հնաձև ալբերենարանի հեղինակ կհամարեր Մեսրոպ Մաշտոցին և ոչ Անանիա Շիրակացուն և չէր պնդի, թե տառերի դասավորումը հին այբրենարաններում խիստ համաձայնեցված էր, միատեսակ էր և կրկնվում անփոփոխ:

Մինչև 1920 թվականը հայ մատենագրությանը հայտնի էր 68 անուն ալբերենարան: Հայ ալբերենարանի պատմությունը գրելու համար նյութեր հավաքելիս ինձ 1939 թվականին հաջողվեց հայկական ալբերենարանների մատենագրական ցուցակը հասցնել 206 անունի, որից 101-ը կազմված է հեզական մեթոդով: Այս վերջին մեթոդով կազմված ալբերենարաններից ես կարողացա ձեռք բերել 62-ը և մանրամասն ուսումնասիրել: Պարզվեց, որ դրանցից 13-ը հնաձև են, իսկ 49-ը՝ նորաձև:

Հնաձև (արևմտահայերը անվանում են հին ոճով) ես անվանում եմ «յարմարեալ ի վաղ ժամանակաց» 30—32 էջանոց փոքրադիր տետր-ալբերենարանները, որոնք հրատարակվել են 1567—1920 թվականներին «Քերական կամ ալբերենարան», «Քերական որ է ալբերենարան», «Տետրակ ալբերենական», «Համառոտ ալբերենարան», «Ալբերենարան համառոտ», «Տետր ալբերենական» և այլ անուններով 10 երկրների 26 քաղաքներում: Դրանք առանց հեզարանի և առանց առաջին ընթերցարանի բաժինների ալբերենարաններ են: Առաջին և երկրորդ էջերում զանազան դասավորությամբ տրված են այբուբեններ: Մյուս էջերում տրված են միայն վանկեր և մեկից մինչև վեցավանկ առանձին բառերի սլոնակներ առանց հեղինակների անունների հիշատակման: Դրանք իրարից տարբերվում են միայն տեխնիկական ձևավորմամբ և տառաձանաղության առաջին 2 էջերի շնչին փոփոխություններով:

Վերոհիշյալ հնաձև ալբերենարաններից մի քանիսը (1772 թվականից) կոչվել են նաև «Տետրակ ալբերենական» կամ «Տետր ալբերենական», որովհետև ալբերենարանը փոքրադիր տետրի ձևով է լույս տեսել, որի պատճառով 1860-ական թվականներին այբրենարանի փոխարեն գործածվել է նաև «տետր» բառը:

Հնաձև ալբերենարանը (1851 թվականից) լույս է տեսել նաև «Քերական» անունով: «Քերական» նշանակում է քերականության հմուտ մարդ, քերականագետ: Անցյալում Լեռական նշանակում էր նաև քերականություն, ճիշտ մեր հասկացած իմաստով: Ալբերենարանը ծառայել է մի տեսակ հիմք ապագա քերականության, այդ պատճառով

էլ կոչվել է քերական կամ «Փոքր քերականություն», ինչպես Աբգար դպիրը անվանել է հայ առաջին տպագիր ալբերենարանը, որ նա լույս է ընծայել 1567 թվականին Կոստանդնուպոլսում իր հիմնած տպարանում: Ափսոս, այդ ալբերենարանից ոչ մի օրինակ չի մնացել:

Ահա այս հնաձև ալբերենարաններն են, որոնց նախատիպը եղել է Մեսրոպ Մաշտոցի «սիղոբայիք կապօք» հորինած նշանագրերը, այսինքն՝ առաջին հայ ալբերենարանը, ուստի լավ կլինի դրանք անվանել Մեսրոպյան:

Սակայն հեզական մեթոդով կազմված նորաձև («նոր ոճով») ալբերենարանների նախատիպը նույնպես Մեսրոպյան ալբերենարանն է: Ես նորաձև եմ անվանում այդ արդիականացված ալբերենարանները, որոնց մեջ կարգալ-գրելու գործը հեշտացնելու նպատակով ժն դարից մտցված են բարեփոխություններ, իսկ դրանք կատարել են այնպիսի կարող և հայտնի դեմքեր, ինչպիսիք են՝ Թովմա Մեծոփեցին, Աբգար Նվդոկացին, Ոսկան Երևանցին, Դուկաս և Մատթեոս Վանանդեցիները, Մխիթար Սեբաստացին, Գրիգոր Փեշտիլմաճյանը, Մինաս վարդապետ Բժշկյանը, Աղեքսանդր Խուրաբաշյանը, Արսեն վարդապետ Բադրատունին, Ստեփանոս Նազարյանը, Զարմայր Մսերյանը, Ներսես Մեղավորյանը, Ռաֆայել Պատկանյանը, Ամբրոսիոս վարդապետ Գալֆայանը, Կարեգին վարդապետ Սրվանձտյանը և շատ ուրիշներ:

Արդ, հեզական մեթոդով կազմված հնաձև ալբերենարաններին մանրամասն ծանոթությունը մեզ իրավունք է տալիս անելու հետևյալ միանգամայն հավանական ենթադրությունը: Մեսրոպ Մաշտոցը մեր առաջին գրուսույցն է, առաջին հայ ալբերենարանի հեղինակը, հայերենի գրուսույցման հեզական մեթոդի հիմնադիրը, ուրիշ խոսքով՝ հայոց լեզվի առաջին մեթոդիստը: Նրա կազմած ալբերենարանը 1500-ից ավելի տարիների ընթացքում հրատարակվել է առանց հեղինակի անունը հիշատակելու: Դրանք լույս են տեսել «Քերական», «Տետրակ ալբերենական», «Գիրք ալբերենից» և այլ անուններով, երբեմն «յարմարեալ ի վաղ ժամանակաց» ենթավերնագրով:

Դասադրբային համաշխարհային գրականության մեջ եզակի երևույթ է սա, որ կարող էր ստեղծել, ինչպես Աղայանն է ասում՝ Մասիսի պես բարձր, մեծ գիտնական-մեթոդիստ Մեսրոպ Մաշտոցը: Միայն մեթոդապես լավ մշակված, հեշտից ղեպի դժվարը սկզբունք պահպանած, միանգամայն պարզագույն կառուցվածք ունեցող և մատչելի

այբբենարանը կարող էր այդքան հրկատակյաց լինել և դառնալ ամենամասնայական դասագիրքը:

Մինչև այժմ Մեսրոպ Մաշտոցի գործունեության ուսումնասիրությանը զբաղվել են բանասերները: Մանկավարժներից զբաղվել է միայն Խորեն վարդապետ Ստեփանեն (հետագայում եպիսկոպոս), որը 1881 թվակա-

նին Թբիլիսիում Հնագիտական ընկերության համար զեկուցում է կարդացել «Մեսրոպ Մաշտոցը որպես մանկավարժ» թեմայով, որը, դժբախտաբար, չի տպագրվել և չի մնացել դիվաններում, ուստի այս հոգվածը պիտի համարել առաջին և նախնական գրավոր փորձ՝ վեր հանելու անմահ լուսավորիչ Մեսրոպ Մաշտոցի մանկավարժական գործունեության մի բնագավառը:

